# «Լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

__________2017թ.**№** ______**Ն**

**ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ՄԻՋև ԿՆՔՎՈՂ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 14.2-րդ կետը` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևը` համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը։

Հավելված

ՀՀ կառավարության 2017 թվականի

________ _____-ի N ____ - Ն որոշման

**Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N**

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԻ ՄԻՋԵՎ ԿՆՔ-ՎՈՂ

**(օրինակելի ձև)**

քաղ. Երևան ____ _____________ 20 թ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 46-րդ կետով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և 20.2 հոդվածի 5-րդ մասով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը` ի դեմս նախարար _____________________ի, ով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, իր լիազորությունների սահմաններում (այսուհետ` լիազոր մարմին) մի կողմից, և _______________________ ընկերությունը (այսուհետ` ընկերություն), ի դեմս _______`________________, ով գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, հաշվի առնելով, որ ընկերությունը հաղթող է ճանաչվել ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված 20__ թվականի _________-ի __-ին հայտարարված մրցույթում, կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ` պայմանագիր) հետևյալի մասին:

1.**Պայմանագրիառարկան է**

Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու ժամկետների սահմանումը:

2.**Կողմերըսահմանում են հետևյալ ժամկետները`**

1) ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումի համար` __30___ օրացուցային օր.

2) շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի համար` ___30__ օրացուցային օր.

3) երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու համար` ___60__ օրացուցային օր:

**3.Ծանուցում**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծանուցումները, հաղորդումների կատարումը համարվում է պատշաճ, եթե կատարված է գրավոր և տրված է առձեռն, կամ ուղարկված է պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ կատարված է փոխանցում ֆաքսի միջոցով կողմի ստորև նշված հասցեով կամ այդ նպատակով կողմի նշած մեկ այլ հասցեով, ընդ որում յուրաքանչյուր դեպքում պետք է առկա լինի գրավոր ստացական, որը կարող է փոխանցվել էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով:

**4.Անհաղթահարելի ուժի, ինչպես նաև կողմերի գործունեության հետ չկապված դեպքեր**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլ դեպքեր, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

**5.Վեճերի լուծումը**

Պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

**6.Այլ դրույթներ**

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու օրվանից և գործում է մինչև Պայմանագրի 2-րդ կետով սահմանված ժամկետների ավարտը:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**7.Կողմերի վավերապայմանները**

Լիազոր մարմին ______________________________________________

(գտնվելու վայրը)

___________________________________________________________________________

(հեռախոսահամարները, կապի այլ միջոցները, հաշվարկային հաշիվ)

Ընկերություն_______________________________________________________

(գտնվելու վայրը, հարկային կոդը)

___________________________________________________________________________

(հեռախոսահամարները, կապի այլ միջոցները, հաշվարկային հաշիվ)

| **ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԱՆՈՒՆԻՑ** | **ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ** |
| --- | --- |
| ______________________________ (անունը, ազգանունը, պաշտոնը) | ______________________________ (անունը, ազգանունը, պաշտոնը) |
| ______________________________ (ստորագրությունը) | ______________________________ (ստորագրությունը) |
| _____ ___________ Կ.Տ. | _____ _____________ Կ.Տ. |
| | (այն դեպքում, երբ ընկերությունը կնիք չունի, այդ մասին հայտարարվում է՝ ձեռագրով նշելով «Ընկերությունը կնիք չունի», և ստորագրվում Պայմանագիրը ստորագրողի կողմից) |